ՏԱՎՈՒՇԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՋՆԱՐԱԿԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԽԵՑԵՂԵՆԸ

Հ. Ս. ԵՍԱՅԱՆ

Հայաստանի միջնադարյան ճարտարապետությունը աչքի է ընկնում սքանչելի քարակերտ հուշարձաններով՝ քաղաքներով ու ամրոցներով, պալատներով ու եկեղեցիներով, կամուրջներով ու քարավանատներով և հոյակապ վանքային համալիրներով:

Սրանց հետ մեկտեղ կան նաև հուշարձաններ, որոնց կառուցման ընթացքում լայնորեն օգտագործվել է շինարարական խեցեղենը, հիմնականում տարբեր ձևերի և չափերի հում ու թրծված աղյուսներ: Նման հուշարձաններից է միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը, ուր ինչպես նշում է Կ.Ղաֆադարյանը, «Կավակերտ էին ոչ միայն հասարակ շենքերը, այլև պալատներն ու բերդերը: Բնակելի տների պատերը շերտ առ շերտ կավով բարձրացվել են ճիշտ այնպես, ինչպես այսօր ցեմենտ-բետոնն է արվում»[1]:

Շինարարական խեցեղենի օգտագործմամբ որոշ չափով աչքի է ընկնում նաև Տավուշի մարզը, ուր քարե հոյակապ ճարտարապետության հետ մեկտեղ հանդիպում են աղյուսից կառուցված եկեղեցիներ, մի շարք քաղաքացիական շինություններ: Հոգևոր կառույցներից աչքի են ընկնում հանրահայտ Կիրանց վանքը և Այգեհովիտ գյուղի մոտ գտնվող Սրվեզի վանքի գլխավոր՝ ս.Նշան եկեղեցին: Այստեղ, բացի սովորական հում և թրծված աղյուսներից, իբրև շինանյութ օգտագործվել են նաև ջնարակով ծածկված շքաղյուսները և շքասալերը, որոնք զարդարում էին կառույցների արտաքին և ներքին պատերի ճակատային հատվածները: Մի շարք հետազոտողներ դա բացատրում են որպես Հայաստանում մահմեդական կառավարիչների ճաշակին տուրք տալու հետևանք: Այդ աղյուսների մի մասը պատրաստվել է տեղում, իսկ առավել շքեղները ներմուծվել են Պարսկաստանից[2]: Սակայն, ինչպես նկատել են Հայաստանի ճարտարապետության շատ հետազոտողներ, մահմեդական շքաղյուսների ծագման գործում հսկայական դեր է խաղացել գունազարդ քարերից խճանկարը (մոզաիկան), որը լայնորեն տարածված էր Հայաստանում և որը Պարսկաստանում փոխարինվեց ջնարակած աղյուսով: Այս հարցի ուսումնասիրության գործում մեծ է Հ.Օրբելու դերը, որը ոչ միայն դասակարգեց մահմեդական շքաղյուսները, ուսումնասիրեց նրանց պատրաստման տեխնիկան, տարածման սահմանները, այլև պարզաբանեց ծագման ակունքները: Հ.Օրբելու կարծիքով, պարսկական շքաղյուսների երևան գալուն մեծապես նպաստել է Անիի շինությունների պատերը զարդարող բազմագույն քարերի խճանկարը[3]:

Ա.Յակոբսոնը նույնպես մահմեդական շքաղյուսների հանդես գալը կապում է հարթ և փորագրված բազմագույն քարերի մոզաիկայի հետ, որը

---

[1] Կ.Գ.Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, պր.1, Ե., 1952, էջ 229:

[2] Բ.Ն.Առաքելյան, Գ.Հ.Կարախանյան, Գառնի 3, Ե., 1962, էջ 101, Ա.Ս.Ժամկոչյան, Միջնադարյան Հայաստանի հախճապակին 9–14-րդ դդ. (Հայաստանի հնագիտական հուշարձաններ, պր.10, Ե., 1981, էջ 129):

[3] Й.А.Орбели, Мусульманские изразцы, Петербург, 1923, с.18, 19.

ծնունդ է առնում Հայաստանի XII–XIII դդ. քաղաքացիական և եկեղեցական կառույցներում[4]: Ն.Տոկարսկին հատկապես գունեղ է նկարագրում Անիի բազմագույն և բազմաձև դեկորը, որը զարդարում է պալատի, Մարգսի տան, հյուրանոցների, Առաքյալների եկեղեցու և այլ շինությունների ճակատները: Նրա կարծիքով, այս բազմագույն ոճը հսկայական ազդեցություն է ունեցել հարևան երկրների արվեստի վրա[5]:

Քննարկվող թեմայի համար առանձնապես հետաքրքիր են մեր պեղած՝ Տավուշ և Այգեձոր գյուղի մոտ գտնվող Աղջկա-բերդ ամրոցներից գտնված մեծ թվով շքաղյուսներն ու շքասալերը, որոնք, ցավոք, հայտնաբերվել են խիստ բեկորային ձևով, որը դժվարացնում է դրանց չափերի ստույգ վերականգնումը: Շքասալերը և շքաղյուսները բաժանվում են տարբեր տիպերի:

Շքասալերի առաջին տիպին են վերաբերում խոշոր, ուղղանկյուն սալիկները, որոնց հաստությունը 1,6–1,8 սմ է: Պահպանված կողմերն ունեն 15–16 սմ երկարություն: Սրանց չափերը որոշելու համար անհրաժեշտ է համեմատել Հայաստանի այլ վայրերից հայտնաբերված սալերի չափերի հետ: Այսպես՝ Եղվարդի եկեղեցու սալերն ունեն 29×29,5 սմ կամ 29×30 սմ չափեր, հաստությունը՝ 1,5–2 սմ[6]: Հայաստանի այլ վայրերից գտնված սալիկները նույնպես բեկորային են, և դրանց չափերը հայտնի չեն: Մեր սալիկների չափերը ճշտելու նպատակով հարմար չէ հիմք ընդունել սովորական աղյուսների չափերը, որոնք խիստ տատանվում են՝ 22×22 սմ-ից մինչև 40×40 սմ-ի միջև[7]: Ուստի, գերադասում ենք Տավուշի ամրոցներից գտնված աղյուսների համար հիմք ընդունել Կիրանց վանքից գտնվածների չափերը, հատկապես այն պատճառով, որ այդ աղյուսները և շքաղյուսներն ունեն նույն՝ 25×25 սմ չափերը:

Այսպիսով, կարելի է ասել, որ Տավուշից և Այգեձորից գտնված շքասալերն ունեցել են քառակուսի ձև՝ 25×25 սմ մակերեսով և 1,8սմ հաստությամբ: Այս տիպի բոլոր շքասալերը ծածկված են կապույտ կամ փիրուզագույն ջնարակով, նմանվում են Եղվարդից, Կիրանցից, Գառնիից[8] և Տիկնունիից[9] գտնված նմուշներին: Այս տիպի երկրորդ տարբերակին են վերաբերում Այգեձորի ամրոցից գտնված ավելի փոքր չափերի սալիկները, որոնք ունեն 9×9 սմ մակերես, 1,6 սմ հաստություն: Այս սալիկները ծածկված են փիրուզագույն ջնարակով:

Երկրորդ տիպին է պատկանում Այգեձորի ամրոցից գտնված սև ջնարակով պատված մի սալիկի բեկորը, հաստությունը՝ 1,8 սմ: Սալիկը հիմքում ուղղանկյուն է, իսկ վերին մասում, աստիճանաբար նեղանալով, կազմում է սուր անկյուն: Նման սալիկները խաչաձև շքասալերի մասեր են, որոնք հիմքում կազմում են խաչ: Դրանք հայտնի են Գառնիից[10] և Տիկնունիից[11]:

Ջնարակած շքաղյուսները գտնվել են Տավուշ և Աղջկա-բերդ ամրոցնե-

---

[4] А.Л.Якобсон, Очерк истории зодчества Армении V-XVIII вв. М.-Л., 1950, с. 99.

[5] Н.М.Токарский, Архитектура древней Армении, Е., 1946, с. 235.

[6] Ա.Ժամկոչյան, Ա.Քալանթարյան, Եղվարդի Ս.Աստվածածին եկեղեցու սալերը (Պատմա-բանասիրական հանդես, 1971, N4, էջ 277):

[7] Հ.Եսայան, Իջևան–Տավուշի միջնադարյան շինարարական խեցեղենը (Հանդես Երևանի համալսարանի, 1996, №2, էջ 58–59):

[8] Հ.Լ.Պետրոսյան, Գառնին 9–14-րդ դդ., Ե., 1988, էջ 49:

[9] Ա.Ս.Ժամկոչյան, ճարտարապետական հարդարանքի նմուշներ Տիկնունի ամրոցից (ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, N12, էջ 71):

[10] Հ. Լ.Պետրոսյան, նշվ. աշխ., աղ .46, նկ. 1–5, աղ .47, նկ.7:

[11] Ա.Ա.Ժամկոչյան, Ճարտարապետական հարդարանքի..., տախտակ 1, նկ .2:

ից: Սրանք ևս բաժանվում են երկու տիպի: Առաջին տիպի աղյուսները գտնվել են Այգեձորում: Սրանք ուղղանկյուն աղյուսներ են, որոնցից ամենախոշոր բեկորն ունի 6 սմ լայնություն, 10 սմ հաստություն, պահպանված երկարությունը 9 սմ է: Այս տիպի աղյուսների չափերը որոշելու համար հիմք ենք ընդունել Դվինի և Օրեն-կալայի ամենավաղ աղյուսների երկարությունը, որը 20 սմ է: Երկրորդ տիպի շքաղյուսները հայտնի են Տավուշ և Այգեձորի Աղջկա-բերդ ամրոցներից: Դրանց ջնարակած արտաքին մակերեսի երկարությունը նունն է՝ 6,2 սմ: Ի տարբերություն առաջին տիպի աղյուսների, դրանք ուղղանկյուն չեն. եթե վերին մակերեսի երկարությունը հասնում է 20սմ, ապա ստորին մասինը, աստիճանաբար նեղանալով, դառնում է 16–17սմ: Հաստությունը տատանվում է՝ 7–12 սմ:

Այս խմբի բոլոր աղյուսները ծածկված են փիրուզագույն ջնարակով, բացառությամբ մեկի, որի մակերեսը սև է: Տավուշի ս.Աստվածածին եկեղեցու պեղումներից հայտնաբերվել են շքաղյուսների մանր բեկորներ՝ ծածկված սպիտակ և վարդագույն ջնարակով:

Այս շքաղյուսները բոլոր պեղավայրերում գտնվել են ինչպես կացարանների հատակներից, այնպես էլ դրանցից 0,4–0,6 սմ բարձրության վրա: Սա վկայում է այն մասին, որ շքաղյուսները զարդարել են պատերի վերին հատվածները և պատուհանները (Եղվարդում, Կիրանցում և այլուր): Անիի Արու-Մահամրանա մզկիթում կանաչ ջնարակով պատված շքաղյուսները զարդարել են շինության պատերը[12]: Հետաքրքիր է, որ Անիի ծալկման շրջանում կարմրավուն քարերով կառուցված պարիսպները հարդարվել են սև քարերից շարված խաչերով և կապտավուն ջնարակով ծածկված կիսագլանաձև շքաղյուսներով[13]: Բացի պատերից, այս շքաղյուսներով զարդարել են, ըստ երևույթին, նաև հատակները: Այդ մասին նշել է Կ.Ղաֆադարյանը՝ Դվինի առնչությամբ: «Միջնաբերդում,–գրել է նա,–որոշ տեղերում հատակը ծածկված է եղել կանաչ ջնարակով պատած շքաղյուսներով, որի մնացորդները երևում են տեղերում[14]:

Շինարարական խեցեղենին են վերաբերում նաև լայնորեն օգտագործված ջրատար և ծխնելույզի խողովակները, որոնք մեր տարածաշրջանում հանդիպում են Իջևանի Աղջկա-բերդ և Մանթաշ, Տավուշ ամրոցներում, Առաքելոց վանքի բաղնիքում և այլուր: Դրանք ունեն 40–41 սմ երկարություն: Վերին լայն անցքի տրամագիծը 12–14 սմ է, ստորինը՝ 10–12 սմ, արգելակող ելուստի բարձրությունը՝ 0,5 սմ: Այս խողովակներն ունեն կարմրավուն կամ դեղնավուն մակերես: Նման խողովակներ հայտնի են Դվինից[15], Անիից[16], Ամբերդից[17], Գառնիից[18], Օրեն Կալայից[19] և այլ վայրերից, որոնց երկարությունը տատանվում է 28–52 սմ:

Հետաքրքիր նյութեր են հայտնաբերվել Տավուշ ամրոցի ստորին բերդի երկրորդ տեղամասի պեղումներից: Այստեղ փլված պատի տակ բացվեցին

---

[12] Н.Я.Марр, Ани, книжная история города и раскопки на месте городища. Л.-М., 1934, с. 92.

[13] Նույն տեղում, էջ 78:

[14] Կ.Գ.Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 229:

[15] Նույն տեղում, էջ 218:

[16] Н.Я.Марр, նշվ. աշխ., էջ 76.

[17] Ս.Վ.Հարությունյան, Անբերդ, Ե., 1978, գծ. 17:

[18] Հ.Լ.Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 49:

[19] Н.Л.Якобсон, Раскопки на городище Орен-кале, Материалы и исследования по археологии СССР, вып. 67, М.-Л., 1959, с. 57, 99, 115, 116.

երեք թոնիրներ: Դրանցից երկուսը ոչ խորը փոսեր էին, որոնց եզրերը սվաղված էին քարերի և կավե շաղախով: Երրորդ թոնիրն ուներ ավելի բարդ կառուցվածք: Նրա պատերը կառուցված էին 5 սմ լայնություն և 0,8 սմ բարձրություն ունեցող կավե ժապավեններով: Եզրերի և փոսի միջև ընկած տարածությունը լցված էր մանր քարերով և ցեխով: Թոնրի հարավային մասում բացվեց տափակ քարերից շարված ակ, որին միանում էին երկու (մեկը՝ ամբողջական) կավե խողովակներ՝ օդ մղելու համար: Այս խողովակները ծածկված էին կապտականաչավուն ջնարակով: Խողովակների միացման տեղը պատված էր լայն, կապույտ ջնարակով ծածկված կալիպտերով: Ջնարակով ծածկված այս խողովակների և կալիպտերի գյուտը եզակի երևույթ է միջնադարյան Հայաստանի շինարարական խեցեղենի շարքում և, որքան մեզ հայտնի է, առաջին անգամ է հանդիպում Հայաստանում և Անդրկովկասում:

Կղմինդրներ: Իջևան–Տավուշի մի քանի հուշարձանների պեղումների ընթացքում հայտնաբերվել են կարմիր և գորշ գույնի լավ թրծված կղմինդրների բազմաթիվ բեկորներ: Դրանք հայտնի են Թանիկ և Այգեհովիտ ամրոցներից, Առաքելոց վանքի բաղնիքից[20], ինչպես նաև Տավուշ և Այգեձորի Աղջկա-բերդ ամրոցներից: Դրանց խիստ բեկորային վիճակը թույլ չի տալիս որոշելու կղմինդրների չափերը: Իրենց ձևերով սրանք բաժանվում են երկու խմբի՝ տափակ սալիկաձև, որոնց եզրերն ունեն ոչ բարձր ելուստներ (սոլեններ) և կալիպտերներ՝ կիսագլանաձև և կղմինդրներ:

Տափակ սալիկների եզրերն ունեն 2–3,5սմ բարձրություն, որը համընկնում է Դվինից գտնված տափակ կղմինդրների չափերին, ինչը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Իջևան–Տավուշի կղմինդրները նման են Դվինից գտնվածներին, որոնք ունեն 25սմ երկարություն, վերին մասի լայնությունը 19,5սմ է, ստորինը՝ 15,5սմ, երկարությունը՝ 34,5սմ, վերին կողմի լայնությունը՝ 25սմ, ստորինը՝ 20,5սմ:

Դվինում սոլենների հետ միասին գտնվել են նաև կալիպտերներ, որոնք հագցվում էին խողովակի կողքերին շարված սոլենների՝ ելուստների վրա, վերևից ներքև, ուստի և անձրևաջրերը ոչ մի տեղից չէին կարող թափվել ծակից ներս: Դվինում գտնված կալիպտերների երկարությունը 35 սմ է, բարձրությունը՝ 15 սմ, տրամագիծը 12 սմ[21]:

Տավուշ ամրոցի ստորին բերդի երրորդ տեղամասի պեղումներից, բացի սովորական կղմինդրներից, գտնվեցին մեկ սոլենի և կալիպտերի բավական խոշոր բեկորներ: Այս գյուտն ունի եզակի նշանակություն Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրության համար: Երկու բեկորներն էլ, ինչպես շքաղյուսները, պատված են բաց կապտավուն ջնարակով: Որքան մեզ հայտնի է, սա առաջին գյուտն է Հայաստանում: Նման ջնարակված կղմինդրներ հայտնի են Վրաստանում, ուր դրանք գտնվել են զարգացած միջնադարի շրջանի Նոդժիխու ամրոցի եկեղեցու ծածկի փլատակների մեջ[22] և XII–XIV դարերով թվագրվող Արախլո գյուղի շրջակայքում պեղված ամրոցում[23]:

---

[20] Г.С.Есаян, Материальная культура бассейна реки Агстев в развитом средневековье, Е., 1992, с. 17, 24, 123.

[21] Կ.Գ.Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 233, նկ.218:

[22] Д.Г.Джагамая, Развалины средневековой крепости "Нлджиху" около села Пахалани (Вопросы археологии Грузии, вып. 1, Тбилиси, 1978, с. 112).

[23] М.И.Синауридзе, Отчет Арахло-Казаретской археологической экспедиции 1974-75гг. (Археологические экспедиции Госмузея Грузии, вып. 5, Тбилиси, 1977, с. 140).

Տավուշ և Այգեձորի Աղջկա-բերդ ամրոցներից գտնված հսկայական հնագիտական նյութը, որը միատեսակ և միաժամանակյա է, ներկայացված է հասարակ և ջնարակ խեցեղենի տարբեր ձևերով, ապակյա, երկաթե բազմատեսակ առարկաներով և հիմնականում թվագրվում է XII–XIII դարերով[24]: Սակայն Այգեձորի ամրոցից նույն շերտում գտնված՝ Հուլավուլյան Աբուհ-Սայաղինի պատկերով 1317–1335թթ. Թավրիզում թողարկված արծաթե դրամը վկայում է, որ մի կողմից, այդ ամրոցը հարատևել է առնվազն մինչև XIVդ. առաջին կեսը, իսկ մյուս կողմից, հաստատում է, որ XII–XIIIդդ. մշակույթն անփոփոխ շարունակվել է XIV դարում:

Թվագրության համար կարևոր նշանակություն ունի շքաղյուսների տիպաբանական վերլուծությունը: Բոլոր շքասալերի և շքաղյուսների ժամանակը և տարածումը ճշգրտելու համար հետաքրքիր են նրանց գունային երանգները: Ինչպես երևում է վերը նկարագրածից, դրանք ծածկված են հիմնականում կապտավուն և փիրուզագույն ջնարակով: Եզակի դեպքերում հանդիպում են սև, սպիտակ և վարդագույն ջնարակով պատված շքաղյուսներ:

Հայաստանի հուշարձաններից (Եղվարդ, Գառնի, Տիկնունի) հայտնաբերված շքաղյուսները զարդարված են կենդանական ու բուսական նախշերով, որոնք կատարված են նույն գույներով և թվագրվում են XII–XIII դարերով: Ի տարբերություն վերը նշված հուշարձանների, Տավուշից գտնված շքաղյուսները հիմնականում միագույն են, գերակշռում են կապտավունն ու փիրուզագույնը: Այս տեսակետից Տավուշի գտածոներն ավելի մոտ են Կիրանց վանքի շքաղյուսներին, որոնք թվագրված են XIII–XIV դարերով և ունեն բաց կապտավուն մակերես: Դրանք համեմատելի են ոչ միայն գունային նույնությամբ, այլ նաև պատրաստման ձևերով ու եղանակով:

Եթե բազմագույն շքաղյուսների պատրաստման ժամանակ լայնորեն օգտագործվում էին թաց կավի դաջազարդումը, կավի և ջնարակի միաժամանակյա թրծումը, ենթաջնարակային նախշազարդումը և հախճապակու թրծման տեխնիկան, ապա Կիրանցի և Տավուշի շքաղյուսներն ու շքասալերը պատրաստվում էին բդուրովին այլ եղանակով: Դրանք լավ թրծված կարմիր աղյուսներ են, որոնց մեկ կողմը թրծումից հետո ծածկվում էր ջնարակով: Այս տարբերական առանձնահատկությունը ցույց է տալիս, որ Իջևան–Տավուշում եղել են արտադրական կենտրոններ:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս շքաղյուսների և մոնդոլական դրամի հայտնաբերումը, Տավուշ և Այգեձորի Աղջկա-բերդ ամրոցները, չնայած մոնդոլական ասպատակություններին (որը փաստագրվում է ավերածությունների ու հրդեհների բազմաթիվ հետքերով) վերջնականապես չեն կործանվել, այլ հարատևել են XIII–XIVդդ. առաջին կեսը:

ГЛАЗУРИРОВАННАЯ СТРОИТЕЛЬНАЯ КЕРАМИКА СРЕДНЕВЕКОВОГО ТАВУША

Г.С.Есаян

Р е з ю м е

В результате раскопок крепостей Тавуш и Ахчка-берд близ села Айгедзор обнаружен огромный археологический материал в виде глазурированной керамики, стеклянных и костяных изделий,

[24] Հ.Ս.Եսայան, Տավուշ և Այգեձոր ամրոցների պեղումները և շքաղյուսների հարցը (Բանբեր Երևանի համալսարանի, 1993, №1, էջ 166):

предметов вооружения и т.д., датируемых XII–XIII вв. В верхних слоях этих памятников обнаружено большое количество изразцов в виде прямоугольных и крестовидных плиток и крупных кирпичей, лицевая поверхность которых была в основном покрыта голубой и бирюзовой и реже, черной, белой и розовой поливой.

В этих же слоях были обнаружены покрытые голубой поливой гончарные трубы и черепица в виде фрагментов сопенов и калиптеров, что впервые наблюдается в Армении.

Эти материалы, а также находка монгольской монеты XIVв. свидетельствуют, что указанные крепости не были окончательно уничтожены монголами и после реконструкции продолжали бытовать до середины XIVв.